ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 օգոստոսի 2012թ. թիվ 151-Ա

ՊԵՏԱԿԱՆ ԲՆԱԿԱՐԱՆԻ ԱՆՀԱՏՈՒՅՑ
ՄԱՍՆԱՎՈՐԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն “Պետական բնակարանային ֆոնդի բնակարանների անհատույց մասնավորեցման մասին” Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1999թ. հունիսի 10-ի թիվ 432 որոշմամբ հաստատված կարգի 1-ին կետով և Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի “Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին” թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.6 կետով՝

Ո ր ո շ ու մ եմ.

1. Ըստ ստացված դիմումի ՀՀ Լոռու մարզի Սպիտակ քաղաքի Ս.Ավետիսյան 18ա/3 հասցեի պետական բնակարանը, որպես ընդհանուր համատեղ սեփականություն, անհատույց մասնավորեցնել դրա օգտագործման իրավունք ունեցող ընտանիքին՝ համաձայն հավելվածի:

2. Օրդեր ստացած քաղաքացիների հետ կնքել անշարժ գույքի նվիրատվության պայմանագիր, որը ենթակա է նոտարական վավերացման, իսկ նվիրատվությամբ ծագող իրավունքները ենթակա են գրանցման Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Սպիտակի տարածքային ստորաբաժանումում:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

2012թ. օգոստոսի 18
ք.Վանաձոր